Հավելյալ հետծննդաբերական բուժօգնություն «Medi-Cal»-ի և «Medi-Cal Access Program»-ի համար

Դուք հղի՞ եք: Հղի՞ եք եղել անցյալ տարի (վերջին 365 օրվա ընթացքում):

Նոր դաշնային օրենքի համաձայն, որն ուժի մեջ է մտնում 2022 թ. ապրիլի 1-ից, Դուք կարող եք օգտվել հղիության և հետծննդաբերական նոր նպաստից: Դուք կարող եք իրավունակ լինել բոլոր ծառայությունների համար՝ **հղիության ընթացքում <u>և</u> մի ամբողջ տարի՝ (365 օր) հղիության ավարտից <u>հետո</u>** («հետծննդաբերական շրջան»): Այս ապահովագրությունը տրամադրվում է «Medi-Cal»-ի և «Medi-Cal Access Program»-ի (MCAP) միջոցով՝ անկախ այն բանից, թե ինչ ներգաղթային կարգավիճակ ունեք կամ ինչ կերպ է ավարտվում հղիությունը:

Եթե Դուք արդեն ունեք «Medi-Cal» կամ MCAP կամ դիմում եք դրանց համար և հղի եք կամ հետծննդաբերական փուլում եք գտնվում, մեզ տեղյակ պահեք այդ մասին, եթե արդեն չեք արել դա: Մեզ այդ տեղեկությունը հարկավոր է միայն այն բանի համար, որպեսզի պարզենք, թե արդյոք Դուք իրավունակ եք ապահովագրություն ստանալու հղիության <u>և</u> հետծննդաբերական 365-օրյա շրջանում:

Մի՛ մոռացեք՝
տեղյակ պահել մեզ, երբ հղիանաք,
տեղյակ պահել, թե երբ է ավարտվել հղիությունը:

Կապվեք Ձեր տեղական շրջանային գրասենյակի հետ
https://www.dhcs.ca.gov/services/medi-cal/Pages/CountyOffices.aspx

կամ

Դիմեք կամ թարմացրեք Ձեր դիմումը «Covered California»-ի էջում
https://www.coveredca.com/

Լրացուցիչ տեղեկություններ կգտնեք այստեղ
https://files.medi-cal.ca.gov/pubsdoco/preg/Pregnancy_Landing.aspx